Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
նախագահ պարոն **ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Հակոբյան,

Ձեզ ենք ներկայացնում մեր մտահոգությունները ՀՀ վարչական դատարանի դատական ակտերով հեռուստաընկերությունների՝ հանրային մուլտիպլեքսում հեռարձակումը դադարեցնելու վերաբերյալ:

«Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցի հիման վրա ՀՀ վարչական դատարանը անվավեր է ճանաչել ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 04.06.2021թ. «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթող ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» թիվ 93-Ա որոշումը և 15.01.2021 թվականի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» թիվ 14-Ա որոշումը: Թիվ 93-Ա որոշման հիման վրա մայրաքաղաքային սփռմամբ հեռարձակվում էր Առաջինի լրատվական ալիքը, որի հեռարձակումը դադարեցվեց համապատասխան դատական ակտի ուժի մեջ մտնելու փաստի ուժով: Հեռարձակման դադարեցումը ենթադրվում է նաև «Արմենիա Թի-Վի» ՓԲ, «Հուսաբեր»,ՓԲ «Շանթ» ՍՊ, «Ա-Թիվի»ՍՊ և «Մուլտի Մեդիա-Կենտրոն Թիվի» ՓԲ ընկերությունների տեսալսողական ծրագրերի համար:

Կարծում ենք, որ վերը նշված որոշումներն անվավեր ճանաչելու պարագայում համապատասխան հեռուստաալիքների հեռարձակման դադարեցումը, իսկ Առաջինի լրատվական ալիքի հեռարձակման չվերականգնումը խնդրահարույց է ստորև ներկայացվող պատճառաբանությամբ:

Քննարկվող ծրագրերի հեռարձակման դադարեցման պարագայում կխաթարվի ՀՀ տարածքում տեղեկատվական անվտանգությունը և անձանց՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ, Սահմանադրության 42-րդ հոդվածներով երաշխավորված իրազեկում ու տեղեկատվություն ստանալու իրավունքը, հանրային մուլտիպլեքսը, որը պետության կողմից ստեղծվել է անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքն ապահովելու համար, չի ապահովի նախկինի պես Սահմանադրությամբ երաշխավորված մամուլի ազատության իրավունքը. հանրապետական սփռման տարածքում խնդիրն ավելի կսրվի, քանի որ կխախտվի օտարերկրյա և ազգային հեռարձակողների քանակական հարաբերակցությունը:

«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ»
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՄՈՒՏՔ N 691
17 08 22

Բացի նրանից, որ նշված ծրագրերի հեռարձակման դադարեցումը հանրային մուլտիպլեքսի հանրապետական սփռման սլոթերով, առաջին հերթին կվնասի ՀՀ քաղաքացիների բազմազան տեղեկատվություն ստանալու իրավունքին, այլ նաեւ կխաթարի տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, որպես զանգվածային լրատվության միջոցի ՀՀ տարածքում բազմակարծության ապահովման հարցում ունեցած գործառույթը: Նաև պետք է հաշվի առնել հանրային մուլտիպլեքսով հեռարձակողները, որոնք հանրությանը տեղեկատվություն մատուցելու հիմնական խողովակն են, կանգնած են ահռելի կորուստների վտանգի առաջ, որոնց փոխհատուցումը կարող է հասնել միլիոնավոր դոլարների: Հեռուստաընկերությունների անջատումը թվային մուլտիպլեքսից կհանգեցնի նաև հարյուրավոր աշխատատեղերի կրճատմանը:

Ավելին՝ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածը հստակ թվարկում է լիցենզիայի դադարեցման հիմքերը: Ավելին, ՀՀ օրենսդրության մեջ ուղղակիորեն բացակայում են ստեղծված իրավիճակում մրցույթը հաղթած ընկերությունների հեռարձակումը դադարեցնելու իրավական հիմքերը:

Սույնով դիմում ենք Ձեզ, որպես մեդիադաշտի լիազոր մարմնի, ստանալու պաշտոնական մեկնաբանություն գործող օրենսդրության շրջանակում և վերը նշված օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի համատեքստում, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից մինչև նոր մրցույթների ամփոփումը վերը նշված տեսալսողական ծրագրերի հեռարձակումը շարունակելու նպատակով:

Հարգանքով՝

„Արմենիա" ԹՎ-ի ֆուտբոլ Կուսակցության

Երկիր Մեդիա ՀՁ Բաղդասար Ասատրյան

Տաճար.Հը. Արարատ Զաքարյան

«Ա.-Թրեյդ» ՀՁՇՄ Սերգեյ Սերգեյան

Կենտրոն ԹՎ-ի Մերգեյ Հարությունյան

«5-րդ ալիք» ՀՁ. Դավիթ Հարությունյան

«Նոր ԶԼ» հեռատեսիլ ՊՈԲԸ Արմեն Ասլանյան

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]